

ԲԱՆԱՍԻԱԿԱՆ

Պ. ԳՆՈՒՆՈՒ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԱՐԳԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

ԻՔՐԵԻ ԳԱՍԱԳԻՐԳ.

(Շ-ը-ն-ի-ն-ը Կ-ն-ը Բ-ն-ի-ն-ը Գ-ն-ը Գ-ն-ը Գ-ն-ը)

14րդ հարցումը պատասխանին մտիկ տալով՝ պետք է լինէր. — Երբ սկսուեց մահմետականութիւնը և ի՞նչ է, Պատասխանը նոյնպէս անփոփ յօրինուած չէ, օրինակ. « ուստի հին և նոր կտակարանի պատմութիւնքը (պետք է լինէր սկզբունքը) և օրէնքներն աղճատելով, կրօնաւարելով և առասպելներով վարդաբեց » : Այս նախադասութեան մէջ առասպելներով բառից առաջ դրուած է նաեւ լորդ է բոլորովին և խօսքի միտքը շփոթում է, Շփոթ է նոյնպէս ըստ մահմետի վարդապետութեան՝ արդարների ու մեղաւորների հատուցման վերաբերեալ կոտորը, որ մէջ չեմ բերում գրուածքս շատ չ'երկարացնելու համար, մանաւանդ, որմէկը յիշել :

Պ. Գնունու Քրիստոնէականի նախագիտելիք յօգուած Ա-ի մասին փոքր ինչ ընդարձակօրէն խօսելով՝ կամեցայ ցոյց տալ գրքի 70-ը, նախադասութիւնների կազմութիւնը, և, Պարոնի հմտութիւնը մի քրիստոնէական վարդապետութեան դասագիրք կազմելու համար, Գալով գրքի դասաւորութեանը՝ ըստիս, մեր ծխական դպրոցների աշակերտների պէս տղայոց ձեռքը չի կարելի տալ առաջին յօդուածի պէս մի գրուածք. ուր հարցերին չեն յարմարվում պատասխանները, և այնպէս գրուած չեն, որ աշակերտի դարգացմանը փոքր ի շատէ նպաստէին ու պատասխանելու դիւրութիւն տային : Եթէ աշակերտը բերան արած չըլինի հարցն ու պատասխանը թուահամարովն հանդերձ, պետք է իւրաքանչիւր հարցին շիւարած մնայ, Իսկ գիրքը, որ բաղկացած է 411 հարցումներից ու պատասխաններից, չի կարելի ամբողջապէս մտքում պահել : 411 հարցում պատասխանները զետեղուած են 236 երեսում : Այսինքն իւրաքանչիւր հարց ու պատասխանը միջին հաշուով կէս երեսից աւելի տեղ է բռնում :

Պ. Գնունին հարցնում է. — « Ի՞նչ է մարդկան նպատակը » : 10 — 12 տարեկան մանուկը կարող է արդեօք այնքան շարժացած լինել, որ կարողանայ այդ փիլիսոփայական հարցը ըմբռնել և պատասխանել : Ափսոս որ Գնունին գրքի յառաջաբանի մէջ չէ յայտնել թէ իւր դասագիրքը ո՞ր կարգի աշակերտների համար է :

Ի՞նչ հարկ կարձայաստանեայց ուղղափառ Եկեղեցու Քրիստոնէական գրած Ժամանակ 10 — 12 տարեկան մանուկների հետ խօսել այնպիսի կրօնների ու աղանդների մասին՝ որոնք գործի հետ ոչինչ կապ

չունին, եւ եթէ հարկ է համարել անպատճառ ծանօթացնել իւր աշակերտներին աշխարհիս երեսին գտնուած կրօնների հետ՝ պէտքէ աշխատէր փոքր ինչ պարզարան լինել, և աշակերտներին նախ այդ ազգերի կեանքի հետ ծանօթացնել, որ Գրիստոնէական վարդապետութեան դասագրքի ուղղութիւնից շատ հեռու մի գործ է:

18րդ պատասխանի մէջ դարձեալ աչքի ընկնող տառերով յիշուած է ոչխարազգեստ գայլեր բառը, այդ բառը արդեօք հեթանոսների՞ն է վերագրում պ. հեղինակը, թէ քրիստոնեայ քարոզիչներին: Եթէ վերջիններիս մասին է, հակառակումէ ինքն իւր 16րդ հարցուպատասխանին, որէ հետևեալը. «որ օր ըստ օրէ բազմանալով և տարածուելով՝ այժմ ամբողջ աշխարհի (մարդկութեան) $\frac{1}{4}$ մասն հետևող ունի, առանց բռնութեամբ քարոզելոյ» եթէ Պ. Գնունին բռնութիւնն ու ոչխարազգեստ գայլութիւնը տարբեր գործողութիւն է համարում, այդ ջոկ բան է. բայց այս ևս կայ, որ հեթանոսները երբէք ոչխարազգեստ գայլութիւն չեն անում, այլ քրիստոնէութիւնը հալածել են առիւծի պէս ձայն արձակելով և քարոզիչներին յայտնապէս կոտորելով. ուրեմն ոչխարազգեստ գայլութիւն անումեն առանց բռնութեամբ քարոզելու քարոզիչները, որոնք սպառնալուտեղ՝ շողորորգումեն, սպանելու տեղ՝ փող են տալիս, երկիւղ տալու տեղ՝ հրապուրումեն:

20րդ հարց ու պատասխանի մէջ Պ. Գնունին Յունաց Ռուսաց եկեղեցիքը արևելեան եկեղեցու առանձին առանձին մասունք է համարում: Բայց յայտնի է որ այդ երկու ազգերը մի եկեղեցի են կազմում ամեն մինը իւր լեզուով իրան ուղղափառ կոչելով: Պ. Գնունու դատմունքը արևմտեան եկեղեցու (պապական) և բողոքականութեան մասին խիստ է և յարձակողական, Եւր դիրքը ճանաչող ուսուցիչը աշակերտների մէջ երբէք այնպիսի ատելութիւն չըպէտք է սնուցանէ զէպի այլ քրիստոնեաները: Եթէ բոլոր եկեղեցիքը մի սկզբունք ու ծէս ունենային, ազգային եկեղեցի չէր լինել և մեր եկեղեցին էլ իրրև քրիստոնեայ եկեղեցի ծէսով ու արարողութեամբ միացած լինելով ընդհանուր քրիստոնէական եկեղեցու հետ՝ կորցրած կըլինէր իւր ազգայնութիւնը: Ամեն եկեղեցու պաշտօնեաների մէջ իւրեանց կոչումը չըզնահատողներ կան, որոնց արատիքը ամբողջութեան չէ կարելի վերագրել, ինչպէս Եզր կաթողիկոսի առ հարկէ՝ Քաղկեդոնի ժողով ընդունելը չի կարելի բոլոր Հայոց Հայրապետներին վերագրել:

Մեր կրօնուսույցները պարտաւոր են Հայաստանեայց քրիստոնէական եկեղեցու ուղղափառ վարդապետութիւնը ուսուցանել աշակերտներին և ոչ բամբասել կամ պախարակել այլ եկեղեցիքը, որի հակադարձն է բամբասուել և պախարակուել: Եկեղեցիների միմեանց հետ ունեցած յարաբերութիւնը կարելի է քննադատել եկեղեցական պատմութեան

մէջ, Իւր գործածած լեզուով կ'ընէ Պ. Գնունին մի բանասիրական գիրք հրատակէր և ոչ թէ մի դասագիրք, գուցէ արդարանար:

Պ. Գնունու կարծիքով բողոքականները Ս. գիրքը աղճատելով, կ'ընեն իրենց ըստ քմաց յարմարեցնելով, որոմանց ծրար մի դարձուցած են և միայն սուրբ գրքի անունն իբրև դիմակ երեսի վերայ առած՝ այնու կը մոլորեցնեն Քրիստոսի Հօտն, Այս աղանդն զանազան ճիւղեր ունի մոլորութեամբ շեղուած յուղղափառութենէ: Զուր տեղը Պ. Գնունին Մատթէոս Աթուղիկոսի Բարի մարդ բարի քրիստոնեայ՝ գրքի յարմար տեղերից մի քանի գլուխ չէ արտագրել:

Անձնական կարծիք չէ կարելի ներմուծել Քրիստոնէական վարդապետութեան դասագրքի մէջ. օրին. Պ. Գնունին 23րդ հարց պատասխանին կցել է մի ծանօթութիւն, որով կարծես թէ մոռացել է թէ ինքն դասագիրք է գրում. Ահա ծանօթութիւնը. — «Այս աղանդոց հետևողի Հայոց հերձեալ բազմաց հետ՝ բազում անգամ խօսելոյ առիթ ունենալով, չըկարացի մի որոշ գաղափար կազմել նոցա վերայ թէ ո՞ր աղանդին կը հետևին, գրեթէ ամեն տեսակ աղանդոց սկզբունքն ունին, և ինքեանք ևս չըգիտնն ստուգիւ թէ ո՞ր աղանդի աշակերտ են, ոմն այս ինչ աղանդոյ, ոմն այն ինչ և բազումք ևս առանց գիտակցութեան հերձեալ են, բաւական համարելով ի հոգևոր իշխանութենէ ապստամբիլ, ուրանալ եկեղեցւոյ ուղիղ վարդապետութիւնն, Ս. խորհուրդք և ծէսք, և լինիլ թեթեալներ, ուրանալով նախնի Ս. հարց ամեն քարոզներն և դաւանածներն: Ամբողջ դասագիրքը այս ծանօթութեան պէս անկանոն կետագրութիւն ունի, ուր հարկաւոր է բուժ՝ միջակէտ է դրուած, ուր հարկաւոր է կէտ՝ ստորակէտ է դրուած, Բառերը անկանոն հոլովմունք ունին. մի տեղ աղանդի է մի տող ներքև աղանդոյ ևլն, Պ. Գնունին գլխատառերի յաճախ գործածութիւնն էլ է շատ սիրում. օրին 22րդ հարց ու պատասխանի մէջ Ս. խորհուրդներ, Արարողութիւններ, Վարդապրութիւններ, Առաքելական Աւանդութիւններ, Ծէսէր Հօտ ևլն:

28րդ հարց պատասխանի մէջ ի միջի այլոց. անհասկանալի է հետեւեալը. — «որոց մի պատճն(է)ն» ինչպէս բոլոր հայրապետաց, նոյնպէս և Արիստակէս Հայրապետին տալով՝ բերաւ ի Հայաստան և ներկայացուց Լուսաւորչին: — Ո՞վ բերաւ Հայաստան, նիկիոյ ժողովը, թէ Ս. Արիստակէս Հայրապետը, Գրուածքից երևումէ որ ժողովքն է բերել:

Յօդուած Դ. Աստուածաշունչ Ս. գիրք. 31րդ հարց ու պատասխանը միմեանց հետ կապ չունին: 32 և 33րդ հարց պատասխանները դասագրքի յատուկ ոճով գրուած չեն. Հնդկաց Ս. գիրքը Ա. հետայ չէ կոչվում այլ վեհա է կոչվում. Ե. և Զ. յօդուածները անմիջական կապ չունին «Քրիստոնէական Վարդապետութիւն» անուն կրող դասագրքի հետ. գուցէ Պ. Հեղինակը մէջ է բերել իւր բազմա-

կողմանի հմտութիւնը ցոյց տալու համար. այդ մտադրութեան խօսք չունիմ ասելու: Ըստիս դժբա մի առանձին բանասիրական յօդուածի նիւթ կարող էին դառնալ: Բայց ոչ երբէք 10—12 տարեկան մանուկների ձեռքում դասագիրք:

Ընդհանրապէս խօսելով նախագիտելիքը աշակերտների համար գրուած բան չէ: Առան զի այդ մասը պարունակումէ իւր մէջ քննութիւն՝ կրօնների վերայ, Աստուածաշունչ Ս. գրքի վերայ՝ մատենագրական անդեկութիւնների, անձնական կարծիք և ըն:

Ըստ իս, գիտութեան ուսուցիչը պետքէ գիտութիւնը սորվեցնի առանց իւր անձնական կարծիքը մէջ բերելու, առանց անբացայայտ կրտորներ աշակերտների առաջը դնելու՝ իւր շատ հմտութեամբ նոցա զարմացնելու նպատակով:

Պ. Գնունին իւր քրիստոնէականը գրելիս՝ ինչպէս երևումէ հետեւել է Բննական կրօնագիտութեան, Ալամդարեանի Քրիստոնէական վարդապետութեան, Մսերի Հրահանգ քրիստոնէական հաւատոյ գրքին և Գարրիէլ ու Արէլ Արքեպիսկոպոսի Քրիստոնէականներին:

Գալով Պ. Գնունու Քրիստոնէական Բ. մասին՝ առանց լեզուի վերայ ուշ դարձնելու, որ արդէն յայտնի եղաւ վերեւ բերած կտորներից՝ պետք է ասեմ որ Պ. Գնունին Հաւատոյ մասունքը գրել է հանգ. Մսերի Քրիստոնէական հաւատոյ գրքի համեմատ, միայն յետ ու առաջ դնելով և Օրէնք Աստուծոյ ու Գալուստ Հոգւոյն սրբոյ յառաքեալս կտորները աւելացնելով:

Բ. գլուխը գրելիս Պ. Գնունին հետեւել է Ալամդարեանին ու Մսերին. նոցա գրաբառը յաւելուածով և փոքր ինչ փոփոխուած բառերով աշխարհաբառի դարձնելով:

Մսեր. Հ. Ի՞նչ ցուցանի գոյութիւն կամ գոյն Աստուծոյ.

Պ. Ակայութեամբ Ս. գրոց, որք քարոզեն թէ գոյ Աստուած:

Ալամ. Հ. Ի՞նչ քարձեալ կարեմք իմանալ զգոյութիւն Աստուծոյ:

Պ. Քննութեամբ աշխարհիս, քանզի տեսեալ զերկինս և զլուսաւորս նորա ի գեղեցիկ կարգի. իսկ զերկիրս ընդ բուսոց իւրոց և կենդանեաց . . . անձամբ անձին գոյանալ ոչ կարեն, վասն որոյ զհետ բերեմք լինել ամենազօր գոյութեան իրիք, որ կար-

Պ. Գնունի. Հ. Աստուծոյ գոյութիւնը ի՞նչ բանով կիմանամք. 74):

Պ. Աստուծոյ գոյութիւնը կիմանամք նախ Աստուածաշունչ Ս. գրքից, որ կը հաստատէ թէ կայ Աստուած:

Պ. Գնունի. Հ. Ուրիշ ինչ ապացոյց կայ Աստուծոյ գոյութեանը. 75):

Պ. Երբոր կը դիտեմք անհուն տիեզերաց գեղեցիկ կարկազրութիւնքը, երկնային լուսաւորները, երկրի բոյսերը և կենդանի-

գեալ զայս ամենայն, կառավարէ զամենայն. և այս ամենազօր գոյութիւնն է Աստուած:

քը, կրխորհեմք որ սղքա ինքնին եղած չեն . . . այլ ունին գոյացնող զօրութիւն մի զոր Աստուած կոչեմք:

Դասագիրք գրողը նեղսիրտ չպէտքէ լինի, նա պարտաւոր է գիտութիւնը ուսուցանել իրրեւ մի հաստատուած ճշմարտութիւն. իսկ հակառակորդների կարծիքները մէջ բերելը կարող է աշակերտների մըտքում տարակուսութիւն և երկբայութիւն ծնեցնել, առանց գործին մի մեծ նպաստ մատուցանելու:

77րդ հարցման պատասխանը, մէջ բերած թուանշաններով, ամենեւին չի պարզաբանում: Մանաւանդ խորթ է թուում՝ զերօնների բազմապատկած կուտակութիւնը. սակայն այդ բանը յաճախ նկատում է Պ. Գնունու գրքի մէջ:

82րդ հարցման պատասխանը դասագրքի յարմար ոճով գրուած չէ: 42 երեսի Ա. Բ. ծանօթութիւնները բոլորովին աւելորդ են: Աւելորդ է նաև 43 երեսի Բ. ծանօթութիւնը:

Պ. Գնունու Քրիստոնէականի ընթացքին նայելով՝ 50րդ երեսի Բ. ծանօթութիւնը աւելորդ է: Աւելորդ է նաև 53 երեսի Գ. ծանօթութիւնը: Շատ աւելորդներ կան, բայց բոլորը եթէ մէջ բերեմ, գրուածքս շատ կերկարի:

218 հարցման պատասխանի մէջ ժամանակագրական սխալ կայ. և անկանոն նախադասութիւններ աչքի են ընկնում:

Գրուածքից երևում է որ Յուլիանոս ուրացողը Աոստանդիանոսից, Տրդատից, Սեղբեստրոսից ու Ս. Գրիգոր Լուսաւորչից առաջ է. բայց յայտնի է որ Յուլիանոսը Տրդատի թոռն Տիրանի օրով Պարսից դէմ մղած պատերազմում մեռաւ. Ի՞նչ է կամենում ասել Պ. Գնունին հետեւեալ բառերով. « և սկսաւ ծաղկել (քրիստոնէութիւնը) օր ըստ օրէ մինչև Ս. Գրիգոր Լուսաւորչի, Սեղբեստրոս Հռովմայ հայրապետի, Տրդատայ և մեծ Աոստանդիանոսի աշխատութեամբ և ընդհանրացաւ Ասիոյ ու Եւրոպայի մէջ շատ տեղեր »:

Արովհետև գիրքը արդէն քննուած է ուր հարկն է, և տպագրուած, վասն որոյ հետամուտ էլ չեմ այդպիսիքը որոնելու. նս գիրքը վեր առայ իրրեւ դասագիրք և ըստ այնմ իմ նկատողութիւններն արեցի:

Պ. Գնունու Քրիստոնէականը գլուխ առ գլուխ նկատողութեան առնելն էլ հրկար աշխատութիւն համարելով, այսքան կ'ասեմ միայն, որ դասագիրք լինելու յարմարութիւն չունի, նախ՝ իճճուած ոճերովն՝ ուր գրաբառն ու աշխարհաբառը խառն Կ. Պօլսոյ և Արարատեան բարբառի հետ հանդէս են դուրս գալիս. Բ. գիտելիքների ճապաղ դասաւորութեամբը՝ ուր քննադատութիւն, պատմութիւն, աւանդութիւն, առասպել, խառն ի խուռն երևան են դուրս գալիս, և իւրեանց յախուռն զանգուածի մէջ՝ կ'որցնում են էա-

կան ուսանելին, եւ չըզդիտեմ թէ, Պ. Գնունին իւր—դասագիրքը ինչ կարգի ուսուցման արաններին համար է գրել. եթէ ծխականների համար է, իւր նպատակին չի կարող ծառայել. եթէ հասակաւոր մարդիկների ընթերցանութեան համար լոկ մի բանասիրական գրուածք է, պէտք չէր գրքին դասագրքի գրութիւն տալ և հարց ու պատասխանով յօրինել:

Քրիստոնէական վարդապետութեան դասագիրք հայ դպրոցների համար պատրաստել է, հանգ. Յարութիւն վարդապետ Ալամխարեան՝ Ռուսերէնից գրաբառ հայերէն թարգմանելով, որի աշխարհաբառը, Բ. մասի մէջ կարեւոր փոփոխութեամբ կարող էր լաւ դասագիրք լինել իւր կարգին դասաւորութեամբ, պատրաստել է հանգ. Մսեր, որի Քրիստոսապատումն ու Հաւատադատումը եթէ այժմեան մաքուր աշխարհաբառի վերածուէին, իրրեւ դասաւորութեան ձեւնարկ կարող էին պիտանի լինել, իսկ Հանգ. Մսերի հրահանգ Քրիստոնէական հաւատոյ գիրքը գուցէ միայն իւր օրով Լազարեան ճեմարանում՝ դասագրքի պաշտօն կատարած լինի:

Քրիստոնէական վարդապետութիւն գրողները մինչև ցայսօր բարոյագիտութիւնը խառնել են հաւատոյ վարդապետութեան հետ և ուշ չեն դարձրել հաւատոյ վարդապետութիւնը որոշել բարոյագիտութիւնից, պատմական հատ կտոր հատուածներից, եկեղեցական ծեսերի նկարագրութիւններից ևլն. Այդ խառնափնթորութիւնները աւելի շփոթութեան մանուկի միտքը, քան թէ նպաստում.—որովհետև մանուկը դժուարանումէ որոշել հաւատոյ վարդապետութիւնը վերոյգրեալներից, Այս ճապաղ գրութիւնը աւելեօք նկատվումէ Պ. Գնունու դասագրքի մէջ, Հանգ. Միքայէլ Եպիսկ. Սալլանթեան միայն իրրեւ փորձ առաջին անգամ բարոյագիտութիւնը որոշ մի ընդարձակ գրքի մէջ ամփոփեց:

Մսերը հաւատը տասն դիտաւոր մասերի է բաժանում. Պ. Գնունին՝ տասն և երկու, Ի՞նչ պէտքէ աշակերտի ուղեղը ծանրաբեռնել մտացածին բաժանումներով, Հայաստանեայց եկեղեցին արդէն իւր հաւատոյ հանդանակը ունի՝ որ բաժանվումէ չորս հատուածների, Ա. երեք հատուածները վերաբերումեն աստուածային երեք անձինքներին. իսկ չորրորդը՝ եկեղեցուն, Այդ հատուածների մէջ բացատրուած են իւրաքանչիւրի ստորոգելիքն, որ դիւրին կերպով կարող է աշակերտը սովորել և ըմբռնել իրրեւ որոշ որոշ բաներ, Փեշտմալձեանը հաւատոյ հանգանակը պարզաբանելով՝ Քրիստոնէական վարդապետութեան նման մի գիրք է յօրինել. բայց այն ևս իւր ընդարձակութեամբ ու փիլիսոփայութեամբ անմատչելի է աշակերտներին:

Մի քանի խօսք էլ իրանի դասագիրքի մասին:

Հատ ժամանակ չէ որ կրօնագիտութեան դասի տեղ մեր դպրոցներում մատակարարվումէ Սրբազան կամ Ս. գրոց պատմութիւն, Սրբա-

զան պատմութիւնը արգարե կարող է մեծ ազդեցութիւն ունենալ մանուկի վերայ իւր առաքինի Աստուածապաշտ, անփառասէր հերոսների կենսագրութեամբ։ Բայց բոլորովին անձնատուր լինելով սրբազան պատմութեանը, անտես առնել ազգային եկեղեցու վարդապետութիւնը, եթէ չ'ասեմ պախարակելի, գոնէ գովելի ընթացք չէ։

Սրբազան պատմութիւնը իւր պարզութեամբ պէտք է մանուկ աշակերտին ուսուցանել իբրեւ եկեղեցական պատմութեան առաջին դար, ընդ նմին պարզ և մեկին բառերով ընտելացնել աշակերտին Քրիստոնէական եկեղեցու հիմնադիր Յիսուս Քրիստոսի պատմութեան հետ, որին կարող է նպաստել Մսերի Քրիստոսապատումը եթէ լեզուն փոքր ինչ յղկուի։ Քրիստոսապատումի դասաւանդութիւնը այնպէս պէտք է բաժանել, որ Սրբազան պատմութեան հետ վերջանայ, Խսկ ազգային եկեղեցական համառօտ պատմութեան հետ սկսել Քրիստոնէական վարդապետութիւն՝ անհրաժեշտ է։ Այսպէս միայն աշակերտը կարող կըլինի ծանօթանալ իւր եկեղեցու անցեալի հետ և կիմանայ իւր հաւատոյ խոռոտովանութիւնը։

Յաւալի է որ մեր ազգային հոգևոր դպրոցները մի օրինաւոր նախագիծ չունին ուսման և շատ անգամ ոչ թէ առարկայի համար է ուսուցիչ փնդովում, այլ ուսուցչի համար առարկայ։ Մեր դպրոցներում դասընթացքները բաժանուած չեն։ Եայտնի չէ թէ աշակերտը որ դասարանում ինչ առարկայ և որքան է սովորելու։ Բայց գուցէ շուտով կըգայ ժամանակը, երբոր բոլոր թեմական տեսուչները, տեսուչները և բանի բուն վարժապետները ժողովք գումարելով, կըկազմեն ազգային դպրոցների համար մի ծրագիր։ Այդ մշակուած ծրագիրը հաստատուելով Հոգևոր թարձր իշխանութիւնից՝ ընդհանրական օրէնք և կանոն կըդառնայ հայ դպրոցների համար։ Գուցէ շուտով կըգայ ժամանակը, երբ մեր դպրոցները կ'ազատուին այս ինչ կամ այն ինչ դի պատրաստած անկապ անկանոն դասադրքից, որ ուսումնարանի վարչութիւնը խաթրիչուն ընդունել է հեղինակին շահելու համար։ Արգոյ ժամանակ երբոր թեմական տեսուչների, տեսուչների և բանիբուն վարժապետների ժողովը ընդհանուր համաձայնութեամբ բոլոր դպրոցների համար առարկաների միատեսակ ձեռնարկներ կ'ընդունի, արդէն եղածների կատարելագոյնը ընդունելով և պակասորդը լրացնելով։ Գուցէ կըգայ ժամանակ, երբոր բոլոր դպրոցները միմեանց հետ այնպիսի կապ ունենան որ մէկի մէջ աւարտողը, առանց զրկանքի և ժամանակի կորուստի, կարողանայ շարունակել մի այլ դպրոցի համեմատաբար բարձր դասարանում։ Ի հարկէ այդ ժամանակ Պ. Գնունու Քրիստոնէականի բաղդը կ'որոշուի կամ կրկին և կրկին տպագրութեամբ կըպսակուի հեղինակի ջանքը և կամ եղածն էլ գրավաճառանոցների դարակների մըշտընջնական զարդը կըմնան մուշտարի չ'ունենալու պատճառով։

Թող ների ինձ Պ. Գնունին, որ ես մի քիչ խիստ վարդեցի իւր դա-

սագրքի հետ: Գիրքը հրատարակուելուց յետոյ հասարակութեանն է պատկանում և հասարակութիւնը կարող է իւր կարծիքը յայտնել որից մէկն էլ ես եմ: Եթէ Պ. Գնունին ինձ էլ հերհուածող աղանդաւոր համարելով կ'ասի. « իսկ զոյլիոսաց, իմաստակաց և հերձուածող աղանդաւորաց բժախնդրութեանց դէմ պատրաստած եմ մի մեծ և ընդարձակ պատասխանի », այն է. արհամարհական լռութիւն: (Եր. է.) ինքն գիտէ: Բայց ես իմ կողմից իբրեւ վերջին խօսք կ'ասեմ՝ 251 երեսի վերջին հատուածի երկու անկապ իմաստները բոլորովին անպէտք են, ինչ յարաբերութիւն ունին Սողոմոնի Իմաստութեան գրքի Բ. 12—23, Գ. 10—15, Ե. 1—5 գրուածները՝ գրքի վերջաբան համարելի գրուածքի հետ որ միասին են գրուած տառնց նոր տողից անգամ սկսելու:

Եթէ Բ. տպագրութեան ժամանակ Պ. Գնունին ուշ կը դարձնի լեզուի կանոնաւորութեան, գիտելիքների օրինաւոր և ամփոփ դասաւորութեան վերայ, մատենագրական քննադատական հատուածները յապաւելով՝ — կիմանամ որ Պ. Գնունին իմ խօսքերը բարեկամի խորհուրդ ընդունելով յարգել է:

Յ. Վ. Մ.

172 Նոյեմբեր 1880 — Չ

Ի Ս. Էջմ-ձին

ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆ.

Յայտնի է, որ երկրագործի կառավարուելու միակ միջոցն ու յոյսն են հողն ու ջուրը: Հողն ու ջուրն են նորան սիրտ և ոյժ տուողն, հողն ու ջուրն են նորա բազմաթիւ գերգաստանի օրապահիկն ու կենսական բոլոր պիտոյքը արտադրում:

Ինչ սիրտ պէտք է ունենայ երկրագործը, երբ իւր թափած դառն քրտինքներով վարած ու ցանած արտերն ու տարիներով խնամարկած այգիները կիսականաչ ու թառամած գետին խոնարհած է տեսնում: Ինչ միտթարութիւն պէտք է ունենայ երկրագործը, երբ բացի իւր աշխատանքից՝ տեսնումէ որ ի զուր նն անցնում իւր գերդաստանի տաժանելի ջանքը, այն գերդաստանի, որ Ապրիլ, Մայիս և Յունիս ամիսներում տապակվումէ ամառնային ջերմ արևի տակ և փոշխնող լինելով՝ բամբակի, քնջիթի և ուրիշ տեսակ ցանքերի միջից մոլախոտերը քաղհանումէ, յուսալով թէ այդ տանջանքը կը վարձատրուի այն արգիւնքով, որ սպասելի է, և ահա այդ բոլոր յոյսերն ու ակնկալութիւնները ի գերեւ են դուրս գալիս ջուր չըլինելու համար:

Այդ զգալիութեան նմանակայ են Քասաղ գետի հովտում՝ Շահ — արիւ կոչուած ջրաբաշխից ներքեւ գտնուող քսանից աւելի Հայաբնակ